ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Այս օրը, նոյեմբեր 29-ը, քաղաքական պատմության մեջ ամենքս գիտենք, թե ինչ դեպքերով է նշանավորվել, սակայն 1997-ի նոյեմբերի 29-ը այլ ձևով է նշանավորվում՝ հոգեփոխությամբ: Էինք այն, ինչ որ ենք, բայց չէինք լիովին այն, ինչ որ պետք էր լինեինք: Այսօր ես տեսնում եմ այդ կերպարանափոխությունը այս հանդեսի միջից և միաժամանակ շնորհավորում մեր Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի աշխույժ, ժրաջան վարիչ-տնօրեն հայր Վազգեն Միրզախանյանին, որ դեռ երեկ վերադարձավ մեկ այլ առաքելությունից:

Շնորհավորանքներս նաև հայր Վազգենի օգնական Զարեհ հայր սուրբին և բոլոր այն անձնավորություններին, որոնք իրենց լուման ունեն ներդրած կենտրոնի աշխատանքների կազմակերպման գործում:

Այսօր առաքյալների տոնն է : Հարցում եմ կատարում թե՛ ինձ և թե՛ ձեզ. քաղաքամայր Երևանում և կամ ամբողջ Հայաստանում քանի՞ հայ կա, որ անդրադառնում է, թե այսօր իր Եկեղեցու հիմնադրության օրն է: Մենք, որ ասում ենք, թե քրիստոնեությունը մենք ենք առաջինը պետականորեն ընդունել, ինչո՞ւ չպանծացնենք մեր ներկայի կյանքով և թողնենք, որ պատմության էջերը միայն խոսեն, և մենք լռենք: Ամոթ այն մարդուն, ով իր հայրերի արածով է բավականանում և դրանով հանդերձ իրեն հայ և քրիստոնյա է համարում: Քո արածի համեմատությամբ Աստծուց պատասխան կստանաս: Գնա և Աստծուն ասա, որ քո ազգը քրիստոնեությունը առաջինն ընդունողն է եղել, և Աստված պետք է պատասխանի, թե դու ո՞վ ես, դու քո հաշիվը տուր և ոչ թե քո նախնիներինը: Ես նրանց պատասխանը իրենց եմ տալու:

Մենք պետք ունենք վերագիտակցության մեր ինքնության: Ես վստահ եմ, որ դուք բոլորդ եք զգում և հավատում, որ այս պահին շուրջ 2.000 տարի առաջ ապրած Հիսուսի երկու առաքյալները հրճվում են երկնքում: Այս առավոտ Մայր Տաճարում 185 տարի առաջ գրված մի գրքից հետևյալ հատվածը կարդացի մեր միաբաններին և Գևորգյան Ճեմարանի սաներին, որ Թադեոս առաքյալը և Սանատրուկ Թագավորի դուստրը՝ Սանդուխտը, Թագավորի կողմից շղթայվել էին և նետվել բանտ: Այդ օրերին Թագավորը մեկ անգամ իր դստեր հետ տեսակցության ժամանակ ասում է նրան. «Դուստր իմ, Սանդուխտ, ինչո՞ւ ինձ թողեցիր և գնացիր մեկ ուրիշի հետևից»: Եվ Սանդուխտը, գրքի հեղինակի բառերով, ասում է, որ հորը երբեք ինքը չի մոռանա, սակայն հորից վեր, նրան ստեղծողին է հետևում: Այնուհետև, երբ սուրը խոցում է նրա կուրծքը, հորդաբուխ արյուն է սկսում դուրս գալ, որից անուշահոտություն է բուրում: Այդ սրբական էյանքի խորհրդանիշն է «հոտ անուշությանը», ապա սպանում են Թադեոսին, որի ժամանակ բացվում է ժայռը, որում ամփոփում են նրա մարմինը: Այդ ժայռի վրա այսօր գտնվում է Ս. Թադեի վանքը: Ես այդ ժայռը ձեռքովս եմ շոշափել, ծունկի եմ եկել, տեսել եմ, թե այդ ժայռի մեջ ինչ խորհուրդ կա:

Մեր զավակաց մեծ մասը այսօր կտրվել է այդ խորհուրդներից, զրկել իրեն նման ճշմարտություններից: Ապրում են մի այնպիսի սպառողական հոգեբանությամբ, որ գաղափարականությունը, հավատքի զորությունը դարձել է պատմության հիշատակ: Ո՛չ: Մենք պետք է վերագտնենք մեզ, վերստին այն վերապրեցնենք մեր կյանքում, և մեր քրիստոնեական դաստիարակության կենտրոնի իմաստը դա է:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներ և բոլոր ուսուցիչներ, այսօր պետք է կերպարանափոխվել, ավելի ճիշտ՝ պայծառակերպվել: Եթե մեկն էինք անում, ապա պետք է երկուսը անենք, քանզի կարիքը կրկնապատկվել է, եռապատկվել: Այսօր ես ողջունում եմ բոլորիդ, որ եկել եք Հայաստանի տարբեր վայրերից: Գնացե՛ք, ձեր տներում, ձեր թաղերում, ձեր բարեկամներին, դրացիներին պատմեք, թե Մայր Աթոռը հոգեկան ջրտուք է իր ժողովրդին և ոչ թե դարուց-դարուց հիշատակ: Այսօր վերանորոգության օր հռչակենք բոլորիս համար: Ես այլևս օտարներով զբաղվելու և նրանց մասին խոսելու ո՛չ կարիք եմ զգում, ո՛չ էլ անհրաժեշտություն: Աղանդավորները գալիս են, քարոզում, իսկ մենք ի՞նչ ենք անում: Մտածենք մեր արածի մասին, ոչ թե նրանց: Թողնենք նրանց մասին խոսելու և մտածելու գործընթացը, որով ակամայից նրանց պրոպագանդիստներն ենք հանդիսանում: Մենք պետք է մեր երեխաներին այնպես դաստիարակենք, հետևելով այն սկզբունքին, թե այն, ինչ թողնում ենք, դա է մնալու:

Ես չէի լինի, ինչ եմ այսօր, եթե իմ մեծ մայրը ինձ աղոթք սովորեցրած չլիներ: Գրել, կարդալ չէր իմանում: Այն ժամանակ դպրոց չկար մեր գյուղում, սակայն այնպիսի կենդանի լեզվով էր մեզ պատմում Հիսուսի կյանքը, որ մեր հոգու մեջ ամրագրվում էր այն: Եվ դուք, ուսուցիչնե՛ր, ժամանակ հատկացրեք դասավանդումի համար և ժամանակի մեջ հոգի դրեք: Երեխաները ձեր միջից պետք է զգան Աստծու ներկայությունը: Ոչ թե նրա մասին պետք է խոսեք աշակերտներին, այլ նա պետք է ձեր միջից խոսի: Ես բոլորիդ ցանկանում եմ կատարյալ հաջողություն և իմ շնորհակալություններն եմ հայտնում Կալիֆոռնիայում Ցինսի Բամբեղշեանին, որ մեր կրթական գործին սատար հանդիսացավ, հանդիսանում է և հանդիսանալու է ապագային: Նաև շնորհակալություններս Որնե Լևոնյանին, որ այսօր մեր մեջ է, Հայ Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչներին Նյու Ջերսիում, որ այս գործին բերեցին իրենց մասնակցությունը՝ իրենց Եկեղեցու 150-ամյակի առիթով: Շնորհակալություն նաև այն բոլոր անձանց, կազմակերպություններին, որոնք մեզ օգտակար են հանդիսանում՝ այս գործը շարունակելու համար: Ուզում եմ նաև մեկ բան ավելացնել ասածներիս: Կրոնական դաստիարակությունը մի չփոթեք գիտության և ծանոթության հետ: Հովսեփը քանի՞ տարեկան էր, Աբրահամը ի՞նչ ընտանիք ուներ, Իսահակը զոհելու ժամանակ ոչխարին ինչպե՞ս զոհաբերեց... սրանք չեն կրոնը: Սրանք մենք սովորում ենք, որպեսզի նրանց միջից Աստծու կյանքի, անդենական կյանքի, հավիտենական կյանքի զգացումը ունենանք: Կրոնը կյանք է, ոչ թե հմտություն և կամ գիտություն: Անհավատը նույնպես կարող է գիտենալ աստվածաշնչական պատմությունները: Կարող է բաց անել գիրքը և սովորել: Ուղեղի հարց է: Սակայն կրոնը ուղեղի հարց չէ, այլ՝ հավատքի, հոգու, սրտի կյանքի, ծառայության:

Ձեր երգելու ժամանակ սիրտս հրճվում էր, սակայն ցանկանում եմ, որ ձեր դեմքերին միշտ ժպիտը խաղա: Ուրախ եղեք, և դա թող լինի Ավետարանի գաղը, որովհետև Ավետարանը հաղթանակի կրոնն է և ոչ թե պարտվողականության, հուսահատության, դժգոհության...: Հիսուսից դժգոհեցին մարդիկ, սակայն Նա որևէ մեկից չդժգոհեց: Նա իր կյանքը տվեց, Իր խոսքը, Իր քարոզը, Իր հավատքը և Իր արյունը: Հետևաբար, այսօր հաղորդվեցիք եկեղեցում, զորացեք և գնացեք պատմելու ուրիշներին: Քրիստոնյա լինելը իր բարձրագույն իմաստին կհասնի, երբ ուրիշին քրիստոնյա դարձնեք: Լինել բավական չէ:

Եվ դուք, երեխանե՛ր, գնացեք, ձեր դասընկերների համար նվագեցեք, երգեք, որպեսզի նրանք էլ գան և մտնեն ձեր շարքերի մեջ: Մի խոսք եմ այսօր մեջ բերելու, որ գրեթե երկու շաբաթ առաջ արտասանեցի Անգլիայում, Անգլիայի եկեղեցու պետի և հասարակության ներկայությամբ: Անգլիայի ամենահայտնի թերթը այդ բառերով էր մեջբերել մեր այցելությունը: Ասացի, թե չի բավեր հավատացյալ լինելը, այլ պետք է դառնալ հավատալի հավատացյալ: Պետք է հավատքով այնպես ապրել, որ կյանքը լինի այդ հավատքի դրսևորումը, և ուրիշներն էլ կհավատան: Պետք է այնպիսի հավատացյալ լինել, որպեսզի ուրիշները հավատան քեզ, քո Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Աստված զորացնի ձեզ և այս օրը զորացնի ամենքիդ: Այս օրը թող արձանագրվի ձեր կյանքում: Աստված օրհնի ձեզ բոլորիդ. ամեն: